



ՈՒԵՖԱ-ի
ԲԺՇԿԱԿԱՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
2017

ՑԱՆԿ

| | |
|---|-----------|
| Նախաբան | 3 |
| I Ընդհանուր դրույթներ | 4 |
| Հոդված 1 Կիրառման շրջանակը | 4 |
| Հոդված 2 Սահմանումներ | 4 |
| II Տուտրովիստների բժշկական հետազոտություն | 4 |
| Հոդված 3 Կիրառումը ՈԻԵՖԱ-ի մրցաշարերի ժամանակ | 6 |
| Հոդված 4 Բժշկական արձանագրություններ | 6 |
| Հոդված 5 Ընդհանուր բժշկական հետազոտություն | 7 |
| Հոդված 6 Հատուկ սրտաբանական հետազոտություններ | 8 |
| Հոդված 7 Լաբորատոր հետազոտություններ | 8 |
| Հոդված 8 Օրթոպեդիկ հետազոտություն և ֆունկցիոնալ ստուգումներ | 8 |
| III Տուտրովիստների, թիմի պաշտոնյաների, մրցավարական կազմի և խաղի պատվիրակների համար նվազագույն բժշկական պահանջներ | 10 |
| Հոդված 9 Նվազագույն բժշկական պահանջները | 10 |
| Հոդված 10 Խաղադաշտի հարակից գոտում գտնվող բժշկական սարքավորումներ | 10 |
| Հոդված 11 Շտապօգնության մեքենա | 12 |
| Հոդված 12 Բժշկական անձնակազմ | 13 |
| Հոդված 13 Շտապ բուժօգնության սենյակ և սարքավորումներ | 14 |
| Հոդված 14 Նախախաղային տեղեկատվություն | 16 |
| Հոդված 15 Նախամրցաշարային տեղեկատվություն | 17 |
| Հոդված 16 Նախընտրելի այլ սարքավորումներ | 18 |
| IV- Եզրափակիչ դրույթներ | 19 |
| Հոդված 17 Կարգապահական ընթացակարգեր | 19 |
| Հոդված 18 Կանոնակարգի նախապատվելի տարբերակ | 19 |
| Հոդված 19 Կանոնակարգի հաստատումը և ուժի մեջ մտնելը | 19 |

Նախարան

Սույն կանոնակարգը հաստատվել է *ՈԻԵՖՍ-ի կանոնադրության* Հոդված 50(1)-ի հիման վրա:

I Ընդհանուր դրույթներ

Հոդված 1 Կիրառման շրջանակը

- 1.01 Սույն կանոնակարգը կիրառվում է այն դեպքերում, երբ վերջինիս հստակ հղում են կատարում ՈԻԵՖԱ-ի հովանու ներքո անցկացվող մրցաշարերի հատուկ կանոնակարգերը:
- 1.02 Այն կանոնակարգում է.
- ա. բժշկական այն հետազոտությունները և ստուգումները, որոնք պետք է անցնեն ֆուտբոլիստները, որպեսզի իրավունք ունենան մասնակցելու ՈԻԵՖԱ-ի մրցաշարերին (տես՝ Գլուխ II);
 - բ. հյուրընկալող ասոցիացիայի կամ ակումբի կողմից ՈԻԵՖԱ-ի մրցաշարերի համար դիտարկվող նվազագույն բժշկական պահանջները, որոնք պետք է կիրառվեն ֆուտբոլիստների, թիմի պաշտոնյաների, մրցավարական կազմի և խաղի պատվիրակների նկատմամբ (տես Գլուխ III):

Հոդված 2 Սահմանումներ

- 2.01 Սույն կանոնակարգի՝ նպատակին ծառայելու համար կիրառվում են հետևյալ սահմանումները.
- շտապօգնության (ALS) մեքենա, որը հազեցած կլինի հնարավորինս բարձր մակարդակով բուժօգնություն ցուցաբերելու համար անհրաժեշտ բոլոր սարքավորումներով: Շտապօգնության մեքենայում նվազագույնը պետք է առկա լինեն վերակենդանացման համար անհրաժեշտ բավարար սարքավորումներ, ինչպես նաև կյանքին սպառնացող վնասվածքները չեզոքացնող սարքավորումներ:
 - ավտոմատացված արտաքին դեֆիբրիլյատոր (AED) — սարք, որը նախատեսված է սրտի ռիթմի խանգարումների էլեկտրոիմպուլսային թերապիայի համար:
 - Էխոկարդիոգրաֆիա — ուլտրաձայնային ախտորոշման մեթոդ, որը նախատեսված է սրտի և փականային ապարատի ֆունկցիոնալ և մորֆոլոգիական փոփոխությունների հետազոտման համար:
 - Էլեկտրասրտագրություն (ԷՍԳ) — սրտի՝ կենսաէլեկտրական ակտիվությունը ուսումնասիրող մեթոդ, որը օգտագործվում է սրտի աշխատանքի խանգարումների հայտնաբերման համար:
 - Առաջին օգնության պայուսակ, որը հեշտությամբ կարող է տեղափոխվել մեկ անձի կողմից և բավականաչափ մեծ է՝ իր մեջ ներառելու խաղաղաշտի հարակից գոտու համար անհրաժեշտ բոլոր բժշկական սարքավորումները:
 - բժշկական սենյակ մարզադաշտում/մարզադահլիճում, որը նախատեսված է ֆուտբոլիստներին, թիմի պաշտոնյաներին, մրցավարական կազմին և խաղի պատվիրակներին բժշկական օգնություն ցուցաբերելու համար:

- պարամեդիկ — որակավորված բուժաշխատող, ով պատրաստ է ցուցաբերելու շտապ բուժօգնություն, ինչպես նաև ախտորոշելու և չեզոքացնելու կյանքին սպառնացող վնասվածքները:
- խաղաղաշտի հարակից գոտում գտնվող շտապօգնության բժիշկ, ով ունի իր երկրում գործող համապատասխան որակավորում:
- մարզադաշտի/մարզադահլիճի բժշկական հարցերը համակարգող անձ, ով կրում է ֆուտբոլային հանդիպման ժամանակ մարզադաշտում/մարզադահլիճում բժշկական ծառայության ապահովման ողջ պատասխանատվությունը:
- թերապևտիկ նպատակով արգելված դեղերի օգտագործման թույլտվություն (TUE) Համաշխարհային Հակադոպինգային Օրենսգրքով սահմանված կարգով արգելված նյութ կամ մեթոդ օգտագործելու համար:

2.02 Սույն կանոնակարգում արական սեռով գործածվող բոլոր ձևերը հավասարապես վերաբերում են նաև իգական սեռին:

II Ֆուտբոլիստների բժշկական հետազոտություն

Հոդված 3 Կիրառումը ՈԻԵՖԱ-ի մրցաշարերի ժամանակ

- 3.01 Հոդված 4, 5 և 6.01 - ում նշված հետազոտություններն ու ստուգումները պարտադիր են ՈԻԵՖԱ-ի մրցաշարերին մասնակցող բոլոր ֆուտբոլիստների համար:
- 3.02 Հոդված 7-ի 6.02 կետում, ինչպես նաև Հոդված 8-ում նշված բոլոր հետազոտություններն ու ստուգումները խիստ նախընտրելի են ՈԻԵՖԱ-ի մրցաշարերին մասնակցող բոլոր ֆուտբոլիստների համար, սակայն պարտադիր են միայն նրանց համար, ովքեր մասնակցում են
- ՈԻԵՖԱ-ի Չեմպիոնների լիգային, ՈԻԵՖԱ-ի Եվրոպա լիգային, ՈԻԵՖԱ-ի Եվրոպայի առաջնությանը, ՈԻԵՖԱ-ի Սուպերգավաթին եւ ՈԻԵՖԱ-ի Երիտասարդական լիգային (այսինքն, յուրաքանչյուրի դեպքում ամբողջ առաջնության ընթացքում ներառյալ ցանկացած որակավորման փուլ),
 - ՈԻԵՖԱ-ի Մ-21 տարեկանների Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլերին, ՈԻԵՖԱ-ի Մ-19 տարեկանների Եվրոպայի առաջնությանը, ՈԻԵՖԱ-ի Մ-17 տարեկանների Եվրոպայի առաջնությանը, ՈԻԵՖԱ-ի կանանց Եվրոպայի առաջնությանը, ՈԻԵՖԱ-ի կանանց Մ-19 տարեկանների Եվրոպայի առաջնությանը, ՈԻԵՖԱ-ի կանանց Մ-17 տարեկանների Եվրոպայի առաջնությանը և ՈԻԵՖԱ-ի Ֆուտզալի Եվրոպայի առաջնությանը:
- 3.03 Բոլոր պարտադիր հետազոտություններն ու ստուգումները պետք է ավարտվեն մրցաշարի մեկնարկից առաջ:

Հոդված 4 Բժշկական արձանագրություններ

- 4.01 Յուրաքանչյուր ֆուտբոլիստ պետք է ունենա ամբողջական բժշկական արձանագրություն, որը պետք է թարմացվի առնվազն յուրաքանչյուր տարի: Վերջինս պետք է ներառի.
1. ֆուտբոլիստի անմիջական ընտանիքի բժշկական տվյալները,
 2. ֆուտբոլիստի ամբողջական բժշկական պատմությունը,
 3. ֆուտբոլիստի ներկայիս բոլոր առողջական խնդիրները,
 4. ցանկացած դեղամիջոցի կամ հավելումների մասին տեղեկություններ, որոնք ընդունում է ֆուտբոլիստը և ցանկացած բուժման նպատակով արգելված դեղերի օգտագործման թույլտվություն, որ տրվել է նրան,
 5. ֆուտբոլիստի պատվաստումների մասին ամբողջական արձանագրություն,
 6. սրտաբանական բոլոր հետազոտությունների արդյունքները:
- 4.02 Ֆուտբոլիստի բժշկական արձանագրությունում պետք է նշվի, թե արդյոք նրա անմիջական ընտանիքի (ծնողներ, քույրեր և եղբայրներ) բժշկական պատմության մեջ եղել են հետևյալ առողջական խնդիրները.

1. հիպերտոնիա, ինսուլտ,
2. սրտաբանական խնդիրներ և դրա հետևանքով առաջացած հանկարծամահություն,
3. անոթային խնդիրներ՝ ներառյալ երակների վարիկոզ լայնացում և խորանիստ երակների տրոմբոզ,
4. շաքարախտ,
5. ալերգիա, ասթմա,
6. քաղցկեղ, արյան հիվանդություններ,
7. հոդային կամ մկանային խրոնիկ խնդիրներ,
8. հորմոնալ խնդիրներ:

4.03 Ֆուտբոլիստի ամբողջական բժշկական արձանագրության մեջ պետք է նշված լինի, թե արդյոք ֆուտբոլիստը երբևէ ունեցել է հետևյալ հիվանդությունները.

1. սրտաբանական խնդիրներ, առիթմիա, ուշագնացություն,
2. ցնցում,
3. ալերգիա, ասթմա,
4. կրկնվող ինֆեկցիաներ,
5. այլ լուրջ հիվանդություններ,
6. լուրջ վնասվածքներ, որոնք պատճառ են հանդիսացել վիրահատության, հոսպիտալացման և/կամ ավելի քան մեկ ամսով ֆուտբոլով չզբաղվելուն:

4.04 Ֆուտբոլիստի ներկայիս առողջական խնդիրների վերաբերյալ մանրամասները պետք է ներառեն հետևյալը.

1. ընդհանուր (մկանային կամ հոդային) ցավեր,
2. կրծքավանդակի ցավ, շնչահեղձություն, սրտի արագ բաբախում, առիթմիա,
3. գլխապտույտ, ուշագնացություն,
4. գրիպային ախտանշաններ՝ ներառյալ հազ և բորբոքումներ,
5. ախորժակի և քաշի կորուստ,
6. անքնություն,
7. ստամոքս-աղիքային խանգարումներ:

Հոդված 5 **Ընդհանուր բժշկական հետազոտություն**

5.01 Յուրաքանչյուր տարի անցկացվում է ընդհանուր ֆիզիկական հետազոտություն, որի ժամանակ պետք է ստուգվի ֆուտբոլիստի

1. հասակը,
2. քաշը,
3. արյան ճնշումը,
4. գլուխը և պարանոցը (ներառյալ աչքեր, քիթ, ականջներ, ատամներ, կոկորդ և վահանաձև գեղձ),

5. ավշային հանգույցները,
6. կրծքավանդակը և թոքերը (զննում, աուսկուլտացիա, պերկուսիա, կրծքավանդակի ընդարձակում ներշնչելիս և արտաշնչելիս),
7. սիրտը (ձայներ, աղմուկ, զարկերակ և առիթմիա),
8. որովայն (ներառյալ ցանկացած ճողվածք կամ սպիներ),
9. արյունատար անոթներ (օրինակ՝ պերիֆերիկ իմպուլսներ, անոթային աղմուկ և երակների վարիկոզ լայնացում),
10. մաշկը (ընդհանուր զննում),
11. նյարդային համակարգ (օրինակ՝ ռեֆլեքսներ և զգայարանների խանգարումներ),
12. շարժողական համակարգ (օրինակ՝ թուլություն կամ ապաճում/ատրոֆիա/):

Հոդված 6 Հատուկ սրտաբանական հետազոտություններ

- 6.01 Ստանդարտ 12-արտածումով ԷՍԳ-ն պետք է կատարվի յուրաքանչյուր տարի և արդյունքները ներառվեն ֆուտբոլիստի բժշկական արձանագրության մեջ:
- 6.02 Էխոկարդիոգրաֆիան պետք է կատարվի երկու տարին մեկ անգամ և արդյունքները ներառվեն ֆուտբոլիստի բժշկական արձանագրության մեջ:

Հոդված 7 Լաբորատոր հետազոտություններ

- 7.01 Նախօրոք տեղեկացված ֆուտբոլիստի համաձայնությամբ պետք է անցկացվի ամբողջական լաբորատոր հետազոտություն՝ համաձայն ազգային օրենսդրության (գաղտնիություն, խտրականություն և այլն): Այդ հետազոտությունը պետք է ներառի
 1. արյան ընդհանուր հետազոտություն (հեմոգլոբին, հեմատոկրիտ, էրիթրոցիտներ, լեյկոցիտներ, սրումբոցիտներ),
 2. մեզի ընդհանուր հետազոտություն (սպիտակուցի և շաքարի մակարդակները որոշելու համար),
 3. գլյուկոզայի հետազոտություն,
 4. կրեատինինի հետազոտություն,
 5. կալիումի հետազոտություն,
 6. նատրիումի հետազոտություն:

Հոդված 8 Օրթոպեդիկ հետազոտություն և ֆունկցիոնալ ստուգումներ

- 8.01 Օրթոպեդիկ հետազոտությունները և ֆունկցիոնալ ստուգումները պետք է կատարվեն յուրաքանչյուր տարի և պետք է ներառեն
 1. Ողնաշարի ֆունկցիոնալ հետազոտություն (զգայունություն, ցավ և շարժունակություն),
 2. թիկունքի ցավ, շարժունակություն և կայունություն,

3. կոնքերի, աճուկների և ազդրերի ցավ և շարժունակություն,
4. ծնկի ցավ, շարժունակություն, կայունություն և էֆուզիա,
5. ոտքի ստորին հատվածի ցավ (սրունքների կամ Աքիլլեյան գարշապարի վնասվածք),
6. կռճի և ոտնաթաթի ցավ, շարժունակություն, կայունություն և էֆուզիա:

III Ֆուտբոլիստների, թիմի պաշտոնյաների, մրցավարական կազմի և խաղի պատվիրակների համար նվազագույն բժշկական պահանջներ

Հոդված 9 Նվազագույն բժշկական պահանջներ

- 9.01 ՈԻԵՖԱ-ի ցանկացած մրցաշարի ժամանակ հյուրընկալող ակումբը/ասոցիացիան պետք է ապահովի սույն գլխում նշված նվազագույն բժշկական պահանջները (ֆուտբոլիստների, թիմի պաշտոնյաների, մրցավարական կազմի և խաղի պատվիրակների բուժման համար):
- 9.02 Եթե պահանջվում է օգտագործել սույն գլխում նշված որևէ դեղորայք, որն արգելված է տվյալ երկրում, ապա պետք է տրամադրվեն նույն գործառույթը կատարող համարժեք այլ դեղամիջոցներ:

Հոդված 10 Խաղադաշտի հարակից գոտում գտնվող բժշկական սարքավորումներ

- 10.01 Սույն կանոնակարգի 11.02 կետով պահանջվող բժշկական պարագաներից զատ առաջին բուժօգնության պայուսակի մեջ պետք է լինեն նաև ստորև նշված բժշկական սարքավորումները, որոնք ՈԻԵՖԱ-ի բոլոր մրցաշարերի խաղային և խաղին նախորդող մարզումային օրերին (MD-1) պետք է գտնվեն խաղադաշտի հարակից գոտում, եթե թիմերը մարզվում են նույն մարզադաշտում/մարզադահլիճում, որտեղ կայանալու է հանդիպումը:
1. Շարժական ներծծող սարք,
 2. Դիմակներով և օդուղիներով շնչառական ռեանիմատորներ, որոնք պետք է ներառեն նազոֆարենգիալ, օրոֆարենգիալ և լարենգիալ օդուղիներ անհրաժեշտ բոլոր չափսերով,
 3. քսայուղ (լուբրիկանտ),
 4. պարանոցի ողերը ֆիքսող կորսետ կամ պարանոցային կոշտ օրթեգ,
Շնչառություն
 5. Ստետոսկոպ,
 6. Պուլսօքսիմետր,
 7. Թթվածին / վնասվածքային դիմակ և խողովակներ,
 8. Փոքրիկ շնչառական դիմակ,
 9. Պարկով շնչառական դիմակ,
 10. բրոնխոդիլատորների բաժանարար սարք,
 11. Շարժական թթվածին (նվազագույնը 15 լ/ր 20 բուլե տևողությամբ)
Արյան շրջանառություն
 12. Ներարկման պարագաներ,
 13. Դեֆիբրիլատոր (AED),
 14. Արյան ճնշման չափասարք՝ մանժետի անհրաժեշտ բոլոր չափսերով,
 15. Արյան գլյուկոզայի չափիչ և/կամ արյան գլյուկոզայի ստուգման ձողիկներ,

Այլ պարագաներ (փոքր)

16. Տուռնիկետ,
17. Կաչուն ֆիքսող պարագաներ,
18. ակնարբուժական լապտեր,
19. ներերակային կատետեր տարբեր չափսերի ասեղներով,
20. ամուր մկրատ (օրինակ 18G կամ 14G),
21. ախտահանող պարագաներ (օրինակ, ալկոհոլային տամպոններ մաշկը մաքրելու համար),
22. մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ,
23. արկղ սուր գործիքների համար,
24. պաշտպանիչ ակնոցներ:

10.02 Առաջին բուժօգնության պայուսակում պետք է լինեն նաև առաջին անհրաժեշտության հետևյալ դեղերը.

1. Ադրենալին 1:10,000 ներարկման համար,
2. Հակահիսթամինային միջոցներ,
3. Հիդրոկորտիզոն,
4. Բենզոդիազեպան (օրինակ՝ սուբլինգվալ դիազեպամի կամ դիազեմուլի ներարկում), եթե բժիշկը իրավասու է ունենալ տվյալ դեղամիջոցները,
5. Սրտի վերակենդանացման համար անհրաժեշտ դեղորայք (ներառյալ սրտի աշխատանքի խթանիչներ և հակաատիթմիկ դեղեր, օրինակ՝ ամիոդարոնի/լիդոկայինի ներարկում),
6. Էպիպեն կամ անապեն,
7. Բրոնխոդիլատորներ (օրինակ՝ սալբուտամոլի ինհալատոր),
8. Գլիցերիլի տրինիտրատի սփրեյ,
9. Գլյուկոզայի հաբեր/ քսուք,
10. Շտապ արձագանքման դեղեր շաքարախտի համար (օրինակ՝ գլյուկագոն),
11. Հակափսխումային դեղորայք:

10.03 Հետևյալ մեծ բժշկական սարքավորումները պետք է առկա լինեն խաղաղաշտի հարակից գոտում ՈւԵՖԱ-ի բոլոր մրցաշարերի խաղային և խաղին նախորդող մարզումային օրերին, եթե թիմերը մարզվում են նույն մարզադաշտում, որտեղ կայանալու է հանդիպումը.

1. Մեկ ողնաշարային պատգարակ, կորաձև պատգարակ կամ վակումային ներքնակ համապատասխան ֆիքսող պարագաներով (կողային հենակներ և ամրագոտիներ), դաշտից ֆուտբոլիստի անվտանգ տարահանումն ապահովելու համար,
2. Վերջույթների ֆիքսման համար նախատեսված ֆիքսատորներ:

10.04 Հետևյալ պարագաները ևս պետք է առկա լինեն խաղաղաշտի հարակից գոտում.

1. Կրիկոտիրոտոմիայի պարագաներ մեկանգամյա օգտագործման նշտարով (լանցետ),
2. Ինտուբացիոն սարքավորումներ,

3. հակահիպերտենսիվ դեղամիջոցներ,
4. զամբյուղ-պատգարակ,
5. արտաքին խթանիչներով և CO2 մոնիտորներով դեֆիբրիլյատորներ 10.01 կետում նշված դեֆիբրիլյատորի փոխարեն օգտագործելու համար, եթե այդպիսին առկա է:

Հոդված 11 Շտապօգնության մեքենա

- 11.01** Բոլոր սարքավորումներով հագեցած մեկ ALS շտապօգնության մեքենա (որում պետք է ներկա լինի նաև մեկ պարամեդիկ), որը նախատեսված է միայն ֆուտբոլիստներին, թիմի պաշտոնյաներին, մրցավարական կազմին և խաղի պատվիրակներին սպասարկելու համար, պետք է գտնվի
- ա.** մարզադաշտում/մարզադահլիճում ՈՒԵՖԱ-ի բոլոր մրցաշարերի խաղային օրերին,
- բ.** ՈՒԵՖԱ-ի Չեմպիոնների լիգայի, ՈՒԵՖԱ-ի Եվրոպա լիգայի, ՈՒԵՖԱ-ի Սուպերգավաթի, ՈՒԵՖԱ-ի Եվրոպայի առաջնության և ՈՒԵՖԱ-ի Եվրոպայի Մ-21 առաջնության խաղերին նախորդող մարզումային օրերին (MD-1), եթե թիմերը մարզվում են նույն մարզադաշտում, որտեղ կայանալու է հանդիպումը:
- 11.02** Շտապօգնության մեքենայում պետք է առկա լինի բոլոր անհրաժեշտ պարագաները պարունակող բժշկական պայուսակ, այդ թվում շարժական թթվածին (նվազագույնը 15լ/րոպե 20 րոպե տևողությամբ) և AED դեֆիբրիլյատոր: Պայուսակը պետք է գտնվի այնպիսի վայրում, որը հասանելի կլինի մարզադաշտից և/կամ հանդերձարանից շտապ բժշկական տարհանման ժամանակ: Այն պետք է դրված լինի հատուկ նախատեսված տեղում.
- ա.** խաղի մեկնարկից 1.5 ժամ առաջ և ևս մեկ ժամ խաղի ավարտից հետո
- բ.** մարզումային օրը (MD-1) առաջին մարզումից 0,5 ժամ առաջ և ևս 0,5 ժամ վերջին մարզումից հետո
- 11.03** Հյուրընկալող ակումբը/ասոցիացիան պետք է թիմի բժշկին հայտնի շտապօգնության մեքենայի գտնվելու վայրը թիմի մարզադաշտ/մարզադահլիճ ժամանելու պահին:
- 11.04** ՈՒԵՖԱ-ի մրցաշարերի (բացի ՈՒԵՖԱ-ի Չեմպիոնների լիգա, ՈՒԵՖԱ-ի Եվրոպա լիգա, ՈՒԵՖԱ-ի Սուպերգավաթ, ՈՒԵՖԱ Եվրոպայի առաջնություն և Եվրոպայի Մ-21 առաջնություն) խաղին նախորդող մարզումային օրերին (MD-1) հյուրընկալող ակումբը/ասոցիացիան պետք է ապահովի ALS շտապօգնության մեքենայի առկայությունը, որի բժշկական անձնակազմում պետք է լինի առնվազն մեկ պարամեդիկ: Իսկ մեքենան պետք է տեղակայված լինի այնպիսի վայրում, որտեղից անհրաժեշտության դեպքում հնարավոր կլինի իրականացնել անհապաղ բժշկական տարհանում:

11.05 ՈՒԵՖԱ-ի ֆուտբոլային հանդիպման կամ մրցաշարի ընթացիկ բոլոր մյուս մարզումների համար հյուրընկալող ակումբը/ասոցիացիան պետք է ապահովի մեկ ALS շտապօգնության մեքենայի առկայությունը, որի բժշկական անձնակազմում պետք է լինի առնվազն մեկ պարամեդիկ: Իսկ մեքենան պետք է կայանված լինի այնպիսի վայրում, որտեղից անհրաժեշտության դեպքում հնարավոր կլինի իրականացնել անհապաղ բժշկական տարահանում:

11.06 Եթե մարզադաշտում/մարզադահլիճում պահանջվում է շտապօգնության մեքենայի առկայություն, ապա պետք է օգտագործվեն մասնավոր շտապօգնության մեքենաներ (եթե հասարակական մեքենաների տրամադրումը չի երաշխավորվում), որպեսզի անհրաժեշտ ժամանակահատվածի համար ապահովվի վերջինիս ներկայությունը:

Հոդված 12 Բժշկական անձնակազմ

12.01 Հետևյալ օրերին հյուրընկալող ակումբը/ասոցիացիան պետք է ապահովի խաղադաշտի հարակից գոտում գտնվող շտապօգնության մեկ բժշկի և պատգարակը տեղափոխող խմբի առկայությունը թիմերի խաղադաշտ/մարզադահլիճ ժամանման պահին, ովքեր պետք է մնան այնտեղ մինչև թիմերի հեռանալը.

- ա. ՈւԵՖԱ-ի բոլոր մրցաշարերի խաղային օրերին,
- բ. ՈւԵՖԱ Չեմպիոնների լիգայի, ՈւԵՖԱ Եվրոպա լիգայի, ՈւԵՖԱ Սուպերգավաթի, ՈւԵՖԱ Եվրոպայի առաջնության և ՈւԵՖԱ-ի Եվրոպայի Մ-21 առաջնության խաղին նախորդող մարզումային օրերին (MD-1), եթե թիմերը մարզվում են նույն մարզադաշտում, որտեղ կայանալու է հանդիպումը:

12.02 Խաղադաշտի հարակից գոտում գտնվող շտապօգնության բժիշկը պետք է լավ տիրապետի անգլերեն լեզվին:

12.03 Խաղադաշտի հարակից գոտում գտնվող շտապօգնության բժիշկը

- ա. պետք է ստանձնի մարզադաշտի/մարզադահլիճի բժշկական հարցերը համակարգողի դերը, եթե այլ պատասխանատու նշանակված չէ,
- բ. պատասխանատու է խաղադաշտի հարակից գոտում գտնվող անհրաժեշտ բժշկական սարքավորումների առկայության համար,
- գ. պատասխանատու է միայն ֆուտբոլիստների, թիմի պաշտոնյաների, մրցավարական կազմի և խաղի պատվիրակների բուժօգնության համար,
- դ. պետք է ժամանի մարզադաշտ/մարզադահլիճ և ունենա բավականաչափ ժամանակ սարքավորումների ու բժշկական ծառայությունների նախապատրաստման համար, որպեսզի վերջիններս

պատրաստ լինեն՝ սկսած թիմերի ժամանման պահից մինչև նրանց հեռանալը,

- ե. պետք է ծանոթ լինի մարզադաշտի բժշկական պլանին և տեղական բժշկական ենթակառուցվածքին,
- զ. պետք է նախքան խաղը/մարզումը ծանոթանա տրամադրված բժշկական սարքավորումների որոշակի տեսակներին/ապրանքանիշներին, ինչպես օրինակ՝ դեֆիբրիլյատոր և տարբեր շնչառական սարքավորումներ:

12.04 Խաղադաշտի հարակից գոտում գտնվող շտապօգնության բժիշկի պարտականությունները կարող է կատարել հյուրընկալող թիմի բժիշկը, եթե

- ա. թիմի բժիշկն ունի իր երկրում գործող համապատասխան որակավորում,
- բ. հյուրընկալող ակումբից/ասոցիացիայից մեկ այլ պաշտոնյա նշանակված է՝ օգնելու մարզադաշտից/մարզադահլիճից անհապաղ բժշկական տարհանում իրականացնելու ժամանակ:

12.05 Պատգարակը տեղափոխող անձնակազմից առնվազն երկուսը պետք է անցած լինեն համապատասխան վերապատրաստում և ունենան

- ա. առաջին բուժօգնություն ցուցաբերելու որակավորում,
- բ. նույնատիպ աշխատանքային փորձ,
- զ. բավականաչափ ֆիզիկական պատրաստվածություն, որպեսզի կարողանա պատգարակով անվտանգ տեղափոխել վնասվածք ստացած ֆուտբոլիստին կամ պաշտոնյային:

12.06 Բոլոր խաղային օրերին երկու թիմերն էլ պետք է ապահովված լինեն պատգարակ տեղափոխող անձնակազմով (յուրաքանչյուր անձնակազմում առնվազն երկուսը՝ համապատասխան վերապատրաստում անցած):

Հոդված 13 Շտապ բուժօգնության սենյակ և սարքավորումներ

13.01 ՈւԵՖԱ-ի մրցաշարերի բոլոր խաղերի ժամանակ պետք է տրամադրվի շտապ բուժօգնության սենյակ: Վերջինս պետք է հնարավորինս մոտ գտնվի հանդերձարաններին (միննույն հարկում), որտեղ պետք է առկա լինեն ներքոնշյալ պարագաները.

- ա. բուժզննման և բուժօգնություն ցուցաբերելու համար նախատեսված սեղան/թախտ,
- բ. երկու աթոռ,
- զ. վերքեր կարելու համար անհրաժեշտ պարագաներ՝ մեկից ավելի չափսի վիրաբուժական թելերով / օր. 2-0, 3-0, 5-0/,

- դ. վերքերը կարելու անհրաժեշտ փաթեթներ,
- ե. սուր պարագաների համար նախատեսված տուփ,
- զ. ձեռքի ախտահանող քսուք,
- է. վիրակապերի փաթեթներ,
- ը. մեզի անալիզի շտապ հանձնման համար ձողիկներ,
- թ. WADA արգելված դեղամիջոցների վերջին ցանկի պատճենը,
- ժ. սառույց և պոլիէթիլենային տոպրակներ,
- ի. տեղային անզգայացման նյութեր (օր. լիդոկային 2%),
- լ. հայելի,
- խ. վառ լույս,
- ծ. ներարկիչներ,
- կ. ասեղներ,
- հ. լեզվի դեպրեսորներ,
- ձ. փայլաթիթեղային սավաններ,
- դ. դիագնոստիկ լապտերներ,
- ճ. սպիրտային տամպոններ,
- մ. ձեռնոցներ (ստերիլ և ոչ ստերիլ),
- յ. վիրակապեր,
- ն. վերքերի մշակման լուծույթ:

13.02 Բուժօգնության սենյակը պետք է լինի բավականաչափ մեծ պատզարակը տեղավորելու համար, ինչպես նաև սենյակում պետք է առկա լինեն հետևյալ իրերը.

- ա. ստետոսկոպ,
- բ. ներուլայզեր դիմակով,
- գ. օֆտալմոսկոպ և աուրոսկոպ,
- դ. ռնզային տամպոններ,
- ե. դեղատոմս դուրս գրելու գրքույկ,
- զ. հակահիստամիններ,
- է. հիդրոկորտիզոն,

- ը. հոսող ջուր,
- թ. զուգարան,
- ժ. բենզոդիազեպաններ (օր. սուբլինգվալ դիազեպամի կամ դիազեմուլի ներարկում),
- ի. ադրենալին 1:10,000 ներարկում,
- լ. ատամները տեղափոխելու կոնտեյներ (միջին չափ),
- խ. շարժական թթվածին (նվազագույնը 15/րոպե 20 րոպե տևողությամբ):

Հոդված 14 Նախախաղային տեղեկատվություն

14.01 Խաղից առնվազն 2 շաբաթ առաջ հյուրընկալող ակումբը/ասոցիացիան պետք է հյուր թիմի բժշկական անձնակազմին, ինչպես նաև ՈւԵՖԱ-ի պատվիրակին տրամադրի հետևյալ տեղեկատվությունը.

1. հյուրընկալող ակումբի/ասոցիացիայի և մարզադաշտի/մարզադահլիճի բժշկական անձնակազմի կոնտակտային տվյալները, որն առնվազն պետք է ներառի.
 - ա. խաղադաշտի հարակից գոտում գտնվող շտապօգնության բժշկի անունը և բջջային հեռախոսահամարը,
 - բ. մարզադաշտի/մարզադահլիճի բժշկական հարցերը համակարգող անձի անունը և բջջային հեռախոսահամարը, եթե վերջինս և խաղադաշտի հարակից գոտում գտնվող շտապօգնության բժիշկը տարբեր մարդիկ են;
2. Մարզադաշտի/մարզադահլիճի քարտեզ, որտեղ հստակ երևում է
 - ա. ֆուտբոլիստների, թիմի պաշտոնյաների, մրցավարական կազմի և խաղի պատվիրակների տրամադրության տակ գտնվող շտապօգնության մեքենայի տեղակայման վայրը,
 - բ. խաղադաշտից, թունելից և հանդերձարանային տարածքից դեպի շտապօգնության մեքենան տանող վթարային ելքը,
 - գ. բժշկական սենյակի գտնվելու վայրը,
3. խաղի օրը (անհրաժեշտության դեպքում նաև մարզումային օրը /MD- 1/) խաղադաշտում որևէ մեկի ստացած լուրջ վնասվածքի դեպքում շտապ տարհանման ծրագրի մանրամասներ,
4. պատահարների և շտապ բուժօգնության համար անհրաժեշտ հարմարություններով ապահովված մոտակա հիվանդանոցի կոնտակտային տվյալներն ու հասցեն/գտնվելու վայրը:

14.02 Հյուրընկալող ակումբը/ասոցիացիան պետք է նշի նաև հետևյալը.

- ա.** արտակարգ իրավիճակների դեպքում մարզադաշտի/մարզադահլիճի ամբողջ բժշկական անձնակազմի անունները և կոնտակտային հեռախոսահամարները,
- բ.** Տեղացի վիրաբույժների կոնտակտային տվյալները և նրանց համապատասխան բժշկական ուղղվածությունը,
- գ.** Հյուրընկալող ակումբի/ասոցիացիայի մեկ ներկայացուցչի կոնտակտային տվյալներ, ով կկարողանա բժշկական անհրաժեշտ օգնություն ցուցաբերել հյուր ակումբին/ասոցիացիային, եթե թիմն արդեն մեկնել է հյուրընկալող երկրից (օրինակ՝ եթե թիմի բժիշկը ստիպված է մնալ վնասվածք ստացած խաղացողի հետ):

Հոդված 15 Նախամրցաշարային տեղեկատվություն

15.01 ՈԻԵՖԱ-ի մրցաշարի առաջին խաղից առնվազն երկու շաբաթ առաջ հյուրընկալող ասոցիացիան ՈԻԵՖԱ-ի պատվիրակին պետք է տրամադրի մրցաշարի բժշկի կոնտակտային տվյալները: Վերջինս պետք է

- ա.** կարողանա սահուն խոսել անգլերեն լեզվով,
- բ.** հյուրընկալվի մրցաշարի անցկացման շտաբում կամ վերջինիս հարևանությամբ մրցաշարի ամբողջ ընթացքում,
- գ.** Օրը 24 ժամ և շաբաթը 7 օր հասանելի լինի՝ սկսած առաջին թիմի ժամանման օրից մինչև վերջին թիմի մեկնման օրը:

15.02 Մրցաշարից առնվազն 3 ամիս առաջ ՈԻԵՖԱ-ին պետք է ներկայացվի խաղերի, մարզումների, հյուրանոցների և թիմային էքսկուրսիաների մասին մանրամասն ծրագիր հետևյալ տեղեկատվությամբ.

- 1.** ինչպես են կարգավորվելու բժշկական միջամտություն պահանջող միջադեպերը, այդ թվում
- ա.** մրցաշարի բժշկական անձնակազմի և բուժօգնության միջոցների միջև բժշկական հաղորդակցման ընթացակարգերը,
- բ.** մրցաշարի ժամանակ հիմնական բժշկական անձնակազմի պարտականությունները,
- գ.** արտակարգ իրավիճակներում տարհանման ծրագրերը,

2. հաստատում այն մասին, որ մրցաշարի ողջ ընթացքում (անհրաժեշտության դեպքում 24/7) թիմերը կստանան համապատասխան բուժօգնություն մրցաշարի համար ընտրված բոլոր բուժհաստատություններում,
3. մրցաշարի համար ընտրված բոլոր բուժհաստատությունների անվանումները, գտնվելու վայրերը, հասցեները և բժշկական ուղղվածությունը՝ ներառյալ մրցաշարային բոլոր մարզադաշտերի/մարզադահլիճների շտապ բուժօգնության միջոցները:

15.03 Նմանատիպ ծրագիրը պետք է նաև ներառի հետևյալը.

1. հյուրընկալող երկրի դեղորայք ներմուծելու ընթացակարգերը,
2. պատվաստումների կարգը և հյուրընկալող երկրի պահանջները դրա վերաբերյալ,
3. հաստատում այն մասին, որ մարզադաշտերում/մարզադահլիճներում կտրամադրվեն բոլոր բժշկական սարքավորումները:

15.04 Ցանկացած նման ծրագիր պետք է պարունակի նաև հետևյալ տեղեկատվությունը.

- ա. մրցաշարի համար ընտրված բոլոր բուժհաստատությունների կոնտակտային անձանց անունները,
- բ. բժշկական ծառայությունների դիմաց հյուր ասոցիացիաների կողմից կատարվելիք վճարումների կարգը,
- գ. մրցաշարի անցկացման համար նախատեսված հյուրանոցներին և մարզումային դաշտերին տրամադրված բժշկական սարքավորումների վերաբերյալ տեղեկատվություն,
- դ. մրցաշարի համար ընտրված յուրաքանչյուր բուժհաստատության աշխատակազմից որպես հիմնական կոնտակտային անձ հանդիսացող առնվազն մեկ անգլիախոս անդամի անուն:

Հոդված 16 Նախընտրելի այլ սարքավորումներ

16.01 Թիմի բժիշկը բոլոր խաղերի ժամանակ պետք է իր հետ բերի իր սեփական շտապ բուժօգնության պայուսակը:

IV- Եզրափակիչ դրույթներ

Հոդված 17 Կարգապահական ընթացակարգեր

17.01 Սույն կանոնակարգի դրույթների ցանկացած խախտում կհանգեցնի ՈւԵՖԱ-ի կողմից պատժամիջոցների կիրառման՝ համաձայն *ՈւԵՖԱ-ի Կարգապահական Կանոնակարգի*:

Հոդված 18 Կանոնակարգի նախապատվելի տարբերակ

18.01 Կանոնակարգի անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն տարբերակների մեկնաբանություններում ցանկացած անհամապատասխանության դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն տարբերակին:

Հոդված 19 Կանոնակարգի հաստատումը և ուժի մեջ մտնելը

19.01 Սույն կանոնակարգը հաստատվել է ՈւԵՖԱ-ի Գործադիր կոմիտեի կողմից 01.05.2017թ. կայացած նիստին և ուժի մեջ է մտնելու 01.01.2018թ:

ՈւԵՖԱ Գործադիր Կոմիտե

Ալեքսանդր Չեֆերին

Նախագահ

Թեոդոր Թեոդորիդիս

Գլխավոր քարտուղար

Քարդիֆ, 01.05.2017